Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարի
2018թ. Դեկտեմբերի «17»-ի
N 1550 հրամանի

# ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳ

## I. Պայմանագրային զինվորական ծառայության ընդունելը

1. Սույն կարգով (այսուհետև՝ Կարգ) կարգավորվում են ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու հետ կապված հարաբերությունները:

2. Քաղաքացիներին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու գործընթացը կազմակերպվում է հետևյալ կարգով.

1) պայմանագրային զինվորական ծառայության ընդունվելու վերաբերյալ զորամասերի (զինվորական կառավարման մարմինների) հրամանատարներին (պետերին) ուղղված քաղաքացիների դիմումները (Ձև 1) առնվազն շաբաթական մեկ անգամ (հրամանատարի կողմից որոշված օրը) քննարկվում են զորամասերի (զինվորական մարմինների) ատեստավորման հանձնաժողովների կողմից: Համապատասխան պաշտոնի առկայության դեպքում հանձնաժողովը յուրաքանչյուր դիմումի վերաբերյալ առաջարկը ներկայացնում է հրամանատարի որոշմանը, իսկ զինկոմիսարիատներ հանձնված դիմումները եռօրյա ժամկետում ուղարկվում են ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության կամ ՀՀ ԶՈՒ ԳՇ կադրերի կամ կազմակերպչական զորահավաքային վարչություններ կամ զորամիավորման կադրային մարմին՝ քննարկման,

2) հրամանատարի կողմից դրական որոշում կայացվելու դեպքում, իսկ ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության կամ ՀՀ ԶՈՒ ԳՇ կադրերի կամ կազմակերպչական զորահավաքային վարչությունում քննարկված դիմումների վերաբերյալ կոնկրետ առաջարկին դիմումատուի համաձայնության դեպքում անձնական գործի հարցման թերթիկը եռօրյա ժամկետում առաքվում է դիմումատուի հաշվառման վայրի համապատասխան

զինկոմիսարիատ, իսկ մերժման դեպքում՝ օրենքով սահմանված ժամկետներում դիմումատուին գրավոր պատասխան է ուղարկվում կամ քննարկման արդյունքների մասին դիմումատուն դիմումի դարձերեսին կատարում է համապատասխան գրառում՝ որոշման մասին տեղեկացված լինելու վերաբերյալ,

3) զինկոմիսարիատներում պահեստազորայինների (քաղաքացիների) անձնական գործերը կազմվում կամ լրացվում են զորամասերի կամ պետական լիազոր մարմնի կադրային մարմինների կողմից ուղարկված հարցման թերթիկների հիման վրա: Անձնական գործերում համապատասխան ճշտումներ և լրացումներ կատարելուց հետո՝ տեղեկատվության լիարժեքությունն ու Կարգի II գլխում նշված փաստաթղթերի առկայությունն ապահովելու նպատակով զինկոմիսարիատը ՀՀ ՊՆ կենտրոնական արխիվից (անհրաժեշտության դեպքում նաև նախկին ծառայության վայրերից և ՀՀ պետական լիազոր այլ մարմիններից) գրությամբ պահանջում և անձնական գործին (գործերին) է կցում նախկինում անցած պայմանագրային զինծառայությունը հիմնավորող անձնակազմի վերաբերյալ հրամանների քաղվածքները և անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

4) անձնական գործին կցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը քաղաքացու կողմից ողջամիտ ժամկետներում չներկայացվելու դեպքում զինկոմիսարիատը եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է հարցում կատարողին,

5) զինկոմիսարիատները քաղաքացիներին ուղեգրում են ռազմաբժշկական փորձաքննության: Առողջական խնդիրների լուրջ հետազոտությունների անհրաժեշտություն չլինելու դեպքում համապատասխան ռազմաբժշկական հանձնաժողովը երկօրյա ժամկետում իրականացնում է քաղաքացու փորձաքննությունը: Զինվորական ծառայությանը պիտանիության վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է ԿՌԲՀ-ի հաստատմանը միայն նեղ մասնագիտական որոշում կայացնելու անհրաժեշտության կամ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությունը բողոքարկվելու դեպքերում,

6) անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունն ապահովելուց հետո հնգօրյա ժամկետում անձնական գործերն ուղարկվում են հարցում կատարողին,

7) զինկոմիսարիատից անձնական գործերն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում զորամասի համալրման (կադրերի) բաժանմունքում ուսումնասիրվում ու սահմանված կարգով նախապատրաստվում են պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու և զինվորական պաշտոնի նշանակելու համապատասխան փաստաթղթերը (2-րդ հավելվածի պահանջներին համապատասխան) և ըստ ստորաբաժանակարգության ներկայացվում կամ ուղարկվում առաջարկվող պաշտոնին նշանակելու իրավասություն

ունեցող պետին: Ընդ որում, սպայական պաշտոնների նշանակման վերաբերյալ փաստաթղթերը վերադաս զորամիավորման հրամանատարների և վարչությունների պետերի կողմից քննարկվում են եռօրյա ժամկետում, իսկ ԶՈՒ ԳՇ կադրերի վարչության կողմից ուսումնասիրվում, յոթնօրյա ժամկետում համապատասխան պետերի և ԶՈՒ գլխավոր շտաբի պետի քննարկմանն են ներկայացվում, այնուհետև ուղարկվում ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչություն՝ պաշտպանության նախարարին ներկայացնելու համար,

8) պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու մասին արձակված հրամանի վերաբերյալ զինծառայողը տեղեկացվում է համապատասխան զինկոմիսարիատի կողմից, որտեղ զինծառայողին է հանձնվում սահմանված ժամկետում ծառայության վայր ներկայանալու մասին կարգագիր, իսկ բացասական որոշման վերաբերյալ համապատասխան կադրային ստորաբաժանումն օրենքով սահմանված ժամկետներում գրավոր պատասխան է ուղարկում դիմումատուին կամ քննարկման արդյունքների մասին դիմումատուն դիմումի դարձերեսին կատարում է համապատասխան գրառում՝ որոշման մասին տեղեկացված լինելու վերաբերյալ:

## II. ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության անցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

3. ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության անցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են.

1) դիմում ծառայության ընդունվելու մասին (Ձև 1),

2) ինքնակենսագրություն,

3) անկետա,

4) բնութագիր նախկին աշխատանքի վայրից (ուսումնական հաստատությունից, տեղական ինքնակառավարման մարմիններից)՝ բնօրինակը և պատճենը,

5) ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությունը՝ զինվորական ծառայությանը պիտանիության վերաբերյալ (տարածքային զինկոմիսարիատի կողմից ուղեգրվում է տվյալ կայազորը սպասարկող ռազմաբժշկական հաստատություն),

6) ծննդյան վկայականի պատճենը՝ 2 օրինակ,

7) դիպլոմի պատճենը՝ հաստատված զինվորական կոմիսարի կողմից (2 օրինակ, որոնք հաստատվում են բնօրինակը ներկայացնելու դեպքում),

8) տեղեկանք պետական ռեգիստրից (անձնագրային բաժնից)՝ հաշվառման և ընտանիքի կազմի մասին (բնօրինակը և պատճենը),

9) ամուսնության (ամուսնալուծության) վկայականի պատճենը՝ 2 օրինակ,

10) երեխաների ծննդյան վկայականների պատճենները՝ 2-ական օրինակ,

11) տեղեկանք հաշվառման վայրի ոստիկանության բաժնից՝ դատվածության կամ վարկաբեկիչ նյութերի առկայության մասին (հարցումը կատարվում է հաշվառման վայրի զինկոմիսարիատի կողմից),

12) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը՝ 2 օրինակ,

13) լուսանկարներ ՝ 9X12 չափսի՝ 2 հատ և 3X4 չափսի՝ 4 հատ,

14) զինգրքույկը,

15) սոցիալական կամ նույնականացման քարտի պատճենը՝ 2 օրինակ:

4. Բացի Կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերից՝

1) վարորդները (տրակտորիստ, էքսկավատորավար և այլն) պետք է ներկայացնեն համապատասխան տեխնիկան շահագործելու իրավունքի (վկայականի) պատճենը,

2) խոհարարները, հացթուխները և սննդի հետ առնչվող այլ անձինք պետք է ներկայացնեն մանրէաբանական և պարազիտոլոգիական հետազոտություն անցած լինելու մասին 15-օրյա վաղեմության տեղեկանք,

3) էլեկտրիկները և կաթսայատան պետերը պետք է ներկայացնեն տվյալ մասնագիտությամբ աշխատելու թույլտվության վկայականի պատճենը:

ՀՀ ՊՆ ___________ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

______________________________________-ին

Երևան քաղաքի Մոլդովական փող. 20 շենքի 12 բն. բնակիչ

____________________________________ից

(անունը, հայրանունը, ազգանունը)

հեռ. (010)614242, (077) 424242

# Դ Ի Մ ՈՒ Մ

Ես՝ ________________________________________________________-ս,

(անունը, հայրանունը, ազգանունը)

ցանկանում եմ պայմանագրային զինվորական ծառայության անցնել ՀՀ զինված ուժերում:

Ծնվել եմ 1977թ., Երևան քաղաքում, ավարտել եմ N178 միջնակարգ դպրոցը, 1995-1997թթ. ծառայել եմ ՀՀ ՊՆ 00000 զորամասում՝ որպես ջոկի հրամանատար:

Խնդրում եմ ընդունել պայմանագրային զինվորական ծառայության համապատասխան պաշտոնի:

Դիմող՝ ______________________ ա., հ., ազգանունը

(ստորագրությունը)

« » _____________2017թ.

Ծանոթագրություն. ՀՀ ՊՆ _____________ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ-ի փոխարեն կարող է գրվել _____________ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (ԲԱԺՆԻ) ՊԵՏ կամ _____________ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարի
2018թ. « »-ի
N հրամանի

# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳ

## I. Զինվորական պաշտոնի նշանակումը

1. Սույն կարգով (այսուհետև` Կարգ) կարգավորվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում պայմանագրային զինծառայողներին զինվորական պաշտոնների (բացառությամբ բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական պաշտոնների) նշանակելու հետ կապված հարաբերությունները:

2. Զինծառայողներին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան զինվորական պաշտոնների նշանակման համար հիմք են`

1) կադրային մարմնի, ինչպես նաև վարչությունների և առանձին բաժինների պետերի կամ ոլորտը համակարգող պաշտոնատար անձանց (անմիջական ենթակայությունից դուրս, տվյալ ոլորտին համապատասխան ռազմահաշվառական մասնագիտության պաշտոնի նշանակման դեպքում) առաջարկը,

2) զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից ներկայացված միջնորդագիրը (Ձև 1)՝ ենթակա ստորաբաժանումների զինծառայողների ներքին տեղափոխությունների դեպքում,

3) ընտանեկան պայմաններից ելնելով՝ տեղափոխվելու խնդրանքով զինծառայողի զեկուցագիրը՝ օրենքով սահմանված հիմքերով հանդերձ, ինչպես նաև պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պետին ենթակա կադրային մարմնի՝ կոնկրետ պաշտոնի նշանակման վերաբերյալ առաջարկը,

4) կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողին տրամադրության տակից պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պետին ենթակա կադրային մարմնի՝ կոնկրետ պաշտոնի նշանակման վերաբերյալ առաջարկը և այդ պաշտոնին նշանակվելու վերաբերյալ զինծառայողի գրավոր համաձայնությունը,

5) մրցույթի արդյունքները:

3. Համապատասխան հիմքերի առկայության դեպքում զինծառայողներին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան զինվորական պաշտոնների նշանակման գործընթացը կազմակերպվում է հետևյալ կարգով.

1) ներկայացվող պաշտոնի համար նախատեսված հատուկ կարևորության կամ հույժ գաղտնի կամ գաղտնի փաստաթղթերի հետ առնչվելու համապատասխան թույլտվության բացակայության դեպքում ձևակերպվում են այն ստանալու վերաբերյալ փաստաթղթեր: Ընդ որում, Կարգի 2-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում թույլտվությունը ձևակերպվում է մինչև միջնորդագիրը ներկայացնելը,

բ. 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում թույլտվությունը ձևակերպվում է նշանակման առաջարկը համապատասխան պետերի հետ համաձայնեցնելուց հետո՝ մինչև հրամանագրման ներկայացնելը,

գ. 5-րդ ենթակետով նախատեսված դեպքերում թույլտվությունը ձևակերպվում է մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչվելուց հետո՝ մինչև հրամանագրման ներկայացնելը,

2) հատուկ կարևորության կամ հույժ գաղտնի կամ գաղտնի փաստաթղթերի հետ առնչվելու համապատասխան թույլտվություն ստանալուց հետո (կամ դրա առկայության դեպքում) Կարգի 2-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում հնգօրյա ժամկետում զորամասի համալրման (կադրերի) բաժանմունքում սահմանված կարգով նախապատրաստվում են զինվորական պաշտոնի նշանակման համապատասխան փաստաթղթեր: Ընդ որում,

- նույն զորամասի հրամանատարի իրավասության սահմաններում հրամանագրման ենթակա պաշտոնի դեպքում՝ զինծառայողի անմիջական պետի զեկուցագիրը,

- այլ պետի իրավասության սահմաններում հրամանագրման ենթակա պաշտոնի դեպքում՝ միջնորդագիրը (Ձև 1): Միջնորդագրում եզրակացությունից առաջ հստակ նշվում է առաջարկի հիմնավորումը (պատճառը կամ անհրաժեշտությունը), բնութագրական մասում հակիրճ նշվում են զինծառայողի կատարողական կարգապահության, վերադասի և ենթակաների հետ փոխհարաբերությունների, բնավորության հիմնական գծերի, մասնագիտական, հրամանատարական կամ ղեկավարման այլ ունակությունների, բարոյահոգեբանական վիճակի, անձը բնութագրող այլ հատկանիշների, վեր-

ջին մեկ տարվա ընթացքում ենթակա ստորաբաժանումում արձանագրված դեպքերի քանակի (մահվան ելքով, մարմնական վնասվածքով, ԶԻԼ-երի թվաքանակը), սպայական ժողովի և սպայի պատվի դատարանի որոշումների, պետական մտածելակերպի մասին՝ ներառելով ՀՀ պաշտպանության նախարարի 2011թ. հունիսի 3-ի N652 հրամանով գործողության դրված «ՀՀ զինված ուժերում սպայի բնորոշման և գնահատման թերթիկ»-ի 1-ին, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 15-րդ և 18-րդ հարցերի պատասխանները:

Միջնորդագրերում ստորագրելու իրավասությունը վերապահվում է նաև հրամանատարի՝ ԱՀՏԱ գծով տեղակալին: Զինծառայողը ծանոթացվում է միջնորդագրի բովանդակությանը: Միջնորդագիրը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային տարբերակով,

բ. 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում առաջարկվող պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պետի կադրային մարմնում յոթնօրյա ժամկետում նախապատրաստվում է զեկուցագիր՝ առաջարկի հիմնավորվածության և օրենքի պահանջներին համապատասխանության վերաբերյալ: Ընդ որում, կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողին զինվորական պաշտոնի նշանակելիս նախօրոք գրավոր տեղեկացվում է կադրերի տրամադրության տակ գտնվող անձանց հաշվառումն իրականացնող ստորաբաժանմանը, ինչպես նաև հաշվի է առնվում վերջին զբաղեցրած պաշտոնը, և դրա ու առաջարկվող պաշտոնների՝ միմյանց նկատմամբ բարձր կամ հավասար կամ ցածր լինելը, ինչին համապատասխան և կիրառվում է զինվորական պաշտոնի նշանակման համար կիրառվող օրենքի համապատասխան հիմքը (Ձև 27),

գ. 5-րդ ենթակետով նախատեսված դեպքերում մրցույթում հաղթող ճանաչվելու վերաբերյալ մրցութային հանձնաժողովի որոշումը պաշտոնի նշանակման վերաբերյալ հրամանի նախագծի նախապատրաստման հիմք է,

3) նույն զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից հրամանագրման իրավասությունից դուրս զինվորական պաշտոնների նշանակման նյութերն ըստ վերադասության ուղարկվում են առաջարկվող պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պետին: Ընդ որում, կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ հավասար պաշտոնների (առանց ՌՀՄ-ի փոփոխության) նշանակման առաջարկները ներկայացվում են անվանացուցակներով, իսկ ցածր պաշտոնների (առանց ՌՀՄ-ի փոփոխության) նշանակման առաջարկները՝ անվա-

նացուցակներին կցելով նաև զինծառայողների զեկուցագրերը՝ ցածր պաշտոնի նշանակվելու համաձայնության մասին,

4) սույն կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթերի հիման վրա առաջարկվող պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պետին ենթակա կադրային մարմնում յոթնօրյա ժամկետում ուսումնասիրվում են ներկայացված փաստաթղթերը, ստուգվում օրենքի պահանջներին համապատասխանությունը և հիմնավորվածությունը, համաձայնեցվում ՌՀՄ-ին համապատասխան վարչության կամ ծառայության կամ առանձին բաժնի պետի (բացակայության դեպքում՝ իրավասու պաշտոնատար անձի) հետ: Ընդ որում՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պետին ենթակա այդ կառույցի բացակայության դեպքում համաձայնեցումը իրականացվում է վերադաս կառույցի կամ պաշտոնատար անձի հետ:

Ավագ կամ միջին հրամանատարական բարձր պաշտոնի նշանակման առաջարկ արվելիս առաջնահերթությունը տրվում է ատեստավորման արդյունքներով առաջխաղացման ռեզերվում ընդգրկված անձին:

ՌՀՄ-ի փոփոխության դեպքում առաջարկը համաձայնեցվում է զբաղեցրած և ներկայացված պաշտոնի ՌՀՄ-ին համապատասխան վարչության կամ ծառայության կամ առանձին բաժնի պետերի հետ, նախապատրաստվում է պաշտոնի նշանակման վերաբերյալ հրամանի նախագիծ (Ձև 2-27) և հիմքերի հետ ներկայացվում պետին,

5) օրենքով սահմանված պահանջների խախտում կամ թերություն (որը հնարավոր չէ տեղում վերացնել) հայտնաբերվելու դեպքում զինվորական պաշտոնի նշանակման առաջարկին ընթացք չի տրվում և այդ մասին գրավոր հայտնվում է ներկայացումն ուղարկող զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին),

6) զինվորական պաշտոնի նշանակման առաջարկ ներկայացնելուց հետո զինծառայողի ազգանվան, անվան, հայրանվան, պաշտոնի, հաստիքի փոփոխման դեպքերում ներկայացնող հրամանատարը (պետը) այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ համապատասխան փոփոխություններ կատարելու համար,

7) զինվորական պաշտոնի նշանակման առաջարկ ներկայացնելուց հետո զինծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցվելու, կամ ծառայողական քննություն նշանակվելու, կամ կարգապահական տույժ ստանալու, կամ այլ դեպքերում, որոնք կարող են խոչընդոտել նոր պաշտոնի նշանակման գործընթացին, ներկայացնող հրամանատարը (պետը) այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում

է ըստ վերադասության, ինչպես նաև պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող պաշտոնատար անձին և այդ հիմքերով գործընթացը կասեցվում է,

8) ստորագրված հրամանները համարակալվում են ստորագրման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում: Հրամանը առաքվում է բոլոր շահագրգիռ ստորաբաժանումներ, այդ թվում՝ զինծառայողի նախկին և նոր պաշտոնների ՌՀՄ-ներին համապատասխան վարչության կամ ծառայության կամ առանձին բաժնի պետին (բացակայության դեպքում՝ իրավասու պաշտոնատար անձին):

4. Զինվորական պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակելիս օրենքի պահանջներին համապատասխան առաջարկը զեկուցագրով, ըստ վերադասության, ուղարկվում է այդ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պետին՝ պահպանելով Կարգի 3-րդ կետի 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ընթացակարգերը:

Զինվորական պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակվելիս (Զև 28-30), ելնելով ծառայողական անհրաժեշտությունից, զինծառայողը կարող է ազատվել իր զբաղեցրած պաշտոնի պարտականությունների կատարումից:

## II. Զինվորական պաշտոնի նշանակելու իրավասությունները

5. Զինծառայողներին զինվորական պաշտոնների նշանակում են.

1) ՀՀ պաշտպանության նախարարը՝

ա. ՀՀ ՊՆ բարձրագույն սպայական կազմի պաշտոնների՝ բացառությամբ ՀՀ նախագահի իրավասությանը վերապահված պաշտոնների,

բ. «գնդապետ» հաստիքային դասակարգումով, ինչպես նաև առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների «փոխգնդապետ» հաստիքային դասակարգումով հրամանատարների պաշտոնների,

գ. ՀՀ պաշտպանության նախարարի անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների զինվորական պաշտոնների,

դ. առաջին սպայական պաշտոնի, ինչպես նաև պահեստազորից պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող անձին սպայական պաշտոնի,

ե. ուսումնառության կամ վերապատրաստման գործուղվելու դեպքում օրենքով սահմանված կարգով կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողներին՝ ուսումնառությունից հետո զինվորական պաշտոնների,

գ. պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողներին առաջին սպայական պաշտոնների,

է. կադրերի տրամադրության տակ թողնված անձանց սույն ենթակետի ա.-ից զ. պարբերություններում նշված պաշտոնների,

ը. անհրաժեշտության դեպքում՝ սույն կետում նշված բոլոր պաշտոնների,

2) ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝

ա. «գնդապետ» դասակարգումով 32 և 33 խմբերի ոչ հրամանատարական կազմի պաշտոնների,

բ. մինչև «փոխգնդապետ» ներառյալ հաստիքային դասակարգումով, այդ թվում՝ գնդի (բրիգադի) և հավասարազոր կառուցվածքային ստորաբաժանումների հրամանատարների տեղակալների, նրանց հավասարեցված, ինչպես նաև այլ սպայական, ենթասպայական և շարքային կազմերի հաստիքային դասակարգումով պաշտոնների,

գ. առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների՝ մինչև «մայոր» ներառյալ հաստիքային դասակարգումով հրամանատարների պաշտոնների,

դ. կադրերի տրամադրության տակ թողնված անձանց սույն ենթակետի ա. և բ. պարբերություններում նշված պաշտոնների,

ե. անհրաժեշտության դեպքում սույն կետում նշված բոլոր պաշտոնների՝ բացառությամբ պաշտպանության նախարարի իրավասությանը վերապահված պաշտոնների,

3) վարչության պետ - գլխավոր շտաբի պետի տեղակալները, բանակի հրամանատարը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ մինչև «փոխգնդապետ» ներառյալ հաստիքային դասակարգումով պաշտոնների (այդ թվում՝ կադրերի տրամադրության տակ թողնված անձանց),

4) բարձրագույն սպայական կազմի հաստիքային դասակարգումով՝ վարչությունների, ռազմաուսումնական հաստատությունների և ռազմական ոստիկանության պետերը, ՀՀ զինվորական կոմիսարը և բանակային կորպուսների (զորամիավորումների) հրամանատարները՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ մինչև «մայոր» ներառյալ հաստիքային դասակարգումով պաշտոնների,

5) դիվիզիաների (միավորումների) հրամանատարները, «գնդապետ» դասակարգումով վարչությունների պետերը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ մինչև «կապիտան» ներառյալ հաստիքային դասակարգումով պաշտոնների,

6) առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների առնվազն «փոխգնդապետ» հաստիքային դասակարգումով հրամանատարները՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ ենթասպայական և շարքային կազմերի հաստիքային դասակարգումով պաշտոնների:

„ Հրամանագրված է „
հրաման N ա/վ
« » _______ 20 թ.
( Կ. տ. )

# Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ՆՇԱՆԱԿՄԱՆ____________________________________________
(առաջարկվող պաշտոնը)
____________________________________________________________________

____________________________________________________________________
(առաջարկի հիմքը՝ օրենքի համապատասխան հոդվածով)

**Առաջարկվող պաշտոնի կոդը** ________________ **Անհրաժեշտ թույլտվության ձևը** _________

## 1. ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

**Զինվորական կոչումը** ______________________________________________
(ում հրամանով, հրամանի N-ը, ամսաթիվը)
**Ա.Ա.Հ.**__________________________________________________________

**Զբաղեցրած պաշտոնը** ______________________________________________
(երբվանից)
____________________________________________________________________

____________________________________________________________________

**Պաշտոնի կոդը** ________________ **Փաստացի թույլտվությունը** _______________________
(ձևը, N-ը և ամսաթիվը)
**Ծննդյան թիվը** ___________________ **Զինկոմիսարիատը** _______________________

**Կրթությունը** ___________________________________________________
(երբ, ինչ մասնագիտությամբ)
____________________________________________________________________

**Ծառայությունը զինված ուժերում**________________________________________
(ծառայության ժամանակահատվածները՝ նշելով օրը, ամիսը, տարին)
**Մասնակցությունը մարտական գործողություններին**____________________________
(վկայականի համարը և տրման ամսաթիվը)
**Ամփոփիչ ստուգումների գնահատականները՝**
**անհատական գնահատականը**_____________ **ստորաբաժանման գնահատականը** _____________

**Վերջին ատեստավորման եզրակացությունը** **թ.**______________________________

**Պայմանագրի ժամկետի ավարտը** ________

**Վերջին տարվա դիսպանսեր ստուգման արդյունքով առողջական վիճակը**
____________________________________________________________________

## 2. ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____________զորամասի հրամանատար

______________________________________________________________________

( զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

Կ.տ. « » 20 թ.

## 3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

(պաշտոնը, զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

«      »            20      թ.

(պաշտոնը, զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

«      »            20      թ.

(պաշտոնը, զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

«      »            20      թ.

(պաշտոնը, զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

«      »            20      թ.

# 4. ԿԱԴՐԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

______________________________________________________________________________

(պաշտոնը, զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

«      »            20      թ.

______________________________________________________________________________

**մուտքերի համարները՝**      «      »            20      թ.

«      »            20      թ.

«      »            20      թ.

______________________________________________________________________________

**Միջնորդագրին  ծանոթացա՝** ______________________________________________

______________________________________________________________________________

( զինծառայողն անձամբ նշում է նաև գրանցման և բնակության հասցեները, հեռախոսահամարը)

______________________________________________________________________________

( զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

«      »            20      թ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

00000 Զ Ո Ր Ա Մ Ա Ս Ի   Հ Ր Ա Մ Ա Ն Ա Տ Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N          -Ա

« ____ » _________20     թ.                                                                 ք. Երևան

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (առաջին պայմանագրի կնքմամբ զինվորական ծառայության ներգրավում)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

պահեստազորի կրտսեր սերժանտ Կարեն Սերոբի Ավետիսյանին (ՀՀ Նաիրիի զինվորական կոմիսարիատ) **ընդունել** պայմանագրային զինվորական ծառայության, նրա հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին երեք տարի ժամկետով առաջին պայմանագիր և **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պահեստի պետ (8/5):

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը կազմում է՝ 02 տարի, 00 ամիս, 10 օր:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

* Հրամանի ձևը վերաբերում է միայն պարտադիր ժամկետային զինծառայություն անցած քաղաքացիներին:

**Ձև 3***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի և 33-րդ հոդվածի 4-րդ մասի (նոր պայմանագրի կնքմամբ զինվորական ծառայության ներգրավում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

պահեստազորի կրտսեր սերժանտ Կարեն Սերոբի Ավետիսյանին (ՀՀ Նաիրիի զինվորական կոմիսարիատ) **ընդունել** պայմանագրային զինվորական ծառայության, նրա հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին երեք տարի ժամկետով նոր պայմանագիր և **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պահեստի պետ (8/5):

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը կազմում է՝ 07 տարի, 00 ամիս, 20 օր:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

* Հրամանի ձևը վերաբերում է նախկինում պայմանագրային զինծառայություն անցած քաղաքացիներին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (առաջին պայմանագրի կնքմամբ զինվորական ծառայության ներգրավում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Պահեստազորի սերժանտ Պողոս Պետրոսի Մարտիրոսյանին (ՀՀ Շահումյանի զինվորական կոմիսարիատ) **ընդունել** պայմանագրային զինվորական ծառայության, նրա հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին հինգ տարի ժամկետով առաջին պայմանագիր և **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի դասակի հրամանատար (12)։

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը կազմում է՝ 02 տարի, 00 ամիս, 12 օր,

2. ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի դասակի հրամանատար, սերժանտ Պողոս Պետրոսի Մարտիրոսյանին **շնորհել** առաջին սպայական «**լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի սպայական կազմ։

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

* Հրամանի ձևը վերաբերում է միայն պարտադիր ժամկետային զինծառայություն անցած քաղաքացիներին։

**Ձև 5***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N -Ա

«____» _________20 թ. ք. Երևան

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի և 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (նոր պայմանագրի կնքմամբ զինվորական ծառայության ներգրավում)՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Պահեստազորի ավագ ենթասպա Արմեն Պետրոսի Պողոսյանին (ՀՀ Արտաշատի զինվորական կոմիսարիատ) **ընդունել** պայմանագրային զինվորական ծառայության, նրա հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին հինգ տարի ժամկետով նոր պայմանագիր և **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի դասակի հրամանատար (12):

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը կազմում է՝ 05 տարի, 00 ամիս, 25 օր:

2. ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի դասակի հրամանատար, ավագ ենթասպա Արմեն Պետրոսի Պողոսյանին **շնորհել** առաջին սպայական «**լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի սպայական կազմ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

* Հրամանի ձևը վերաբերում է նախկինում պայմանագրային զինծառայություն անցած քաղաքացիներին:

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

«____» _________20 թ. ք. Երևան

### ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԵԼՈՒ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի և 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (զորակոչի միջոցով զինվորական ծառայության ներգրավում)՝

### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

1. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցած ներքոհիշյալ քաղաքացիներին **զորակոչել** պարտադիր զինվորական ծառայության երեք տարի ժամկետով, **շնորհել** առաջին սպայական «**լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով սպայական կազմ և **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում՝ համապատասխան պաշտոնների.

1) Պողոս Պողոսի Պողոսյանին (ՀՀ Արմավիրի զինկոմիսարիատ)՝ 00000 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 5-րդ հրաձգային վաշտի 2-րդ դասակի հրամանատար (12),

2) Վարդան Վարդանի Վարդանյանին (ՀՀ Շահումյանի զինկոմիսարիատ)՝ 00000 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 9-րդ հրաձգային վաշտի 3-րդ դասակի հրամանատար (12):

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (առաջին պայմանագրի կնքմամբ զինվորական ծառայության ներգրավում)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. Աննա Հակոբի Հովհաննիսյանին (ՀՀ Աշտարակի զինվորական կոմիսարիատ) **ընդունել** պայմանագրային զինվորական ծառայության, նրա հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին հինգ տարի ժամկետով առաջին պայմանագիր և **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի կապի հանգույցի հեռախոսային կայանի պետ (5/2):

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը կազմում է՝ 00 տարի, 00 ամիս, 00 օր:

2. ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի կապի հանգույցի հեռախոսային կայանի պետ Աննա Հակոբի Հովհաննիսյանին **շնորհել** առաջին **«շարքային»** զինվորական կոչում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

* Հրամանի ձևը վերաբերում է առաջին անգամ պայմանագրային զինծառայության ներգրավվող իգական սեռի քաղաքացիներին:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

00000 Զ Ո Ր Ա Մ Ա Ս Ի Հ Ր Ա Մ Ա Ն Ա Տ Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (ծառայության մեջ առաջխաղացման կարգով)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

ավագ Վարդան Վրույրի Վարդանյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ավտոմոբիլային վաշտի ավտոմոբիլային ջոկի հրամանատար (8/3)՝ ազատելով նույն զորամասի ավագ վարորդի (5/2) պաշտոնից:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (վաշտի սերժանտի պատրաստման ծրագրով սերժանտական դասընթացներն ավարտած զինծառայողին՝ ծառայության մեջ առաջխաղացման կարգով)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ թողնված սերժանտ Արտակ Սրապիոնի Վարդանյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 1-ին հրաձգային վաշտի 1-ին հրաձգային դասակի հրամանատարի տեղակալ - ջոկի հրամանատար (6/5):

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՎԱԳ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԵՎ ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 35-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (վաշտի սերժանտի պատրաստման ծրագրով սերժանտական դասընթացներն ավարտած զինծառայողին՝ ծառայության մեջ առաջխաղացման կարգով)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սերժանտական դասընթացներ գործուղվելու կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ թողնված կրտսեր սերժանտ Նիկոլայ Վրույրի Սերոբյանին **շնորհել** ավագ ենթասպայական «**ենթասպա**» զինվորական կոչում,

2. ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ թողնված ենթասպա Նիկոլայ Վրուրի Սերոբյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 1-ին հրաձգային վաշտի ավագ (9/5):

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (մրցույթի արդյունքներով)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

փոխգնդապետ Վարդան Արմենի Վարդանյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ամբիոնի պետ (32)՝ ազատելով նույն զորամասի ավագ դասախոսի (25) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.                                                  ք. Երևան

## ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (ատեստավորման արդյունքներով)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

փոխգնդապետ Վարդան Արմենի Վարդանյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրամանատար (36)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի հրամանատարի տեղակալի (30) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

«____» _________20 թ. ք. Երևան

## ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

գնդապետ Արամ Վարդանի Վարդանյանին ս.թ. դեկտեմբերի 12-ից **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի պետ (37)՝ ազատելով նույն զորամասի պլանավորման և վերլուծության բաժնի պետի (36) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

* Հրամանի ձևը վերաբերում է կազմակերպչական-հաստիքային միջոցառումների ժամանակ բարձր պաշտոնի նշանակվող անձանց, ում վերանշանակումները պայմանավորված են միայն պաշտոնի անվանման և հաստիքային դասակարգման փոփոխության հետ, սակայն չեն փոխվում կամ հիմնականում չեն փոխվում գործառութային պարտականությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 15-րդ հոդվածի 1-ին մասի (կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մայոր Արամ Վարդանի Վարդանյանին ս.թ. դեկտեմբերի 12-ից **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի ավագ սպա (25)՝ ազատելով նույն զորամասի պլանավորման և վերլուծության բաժնի ավագ սպայի (20) պաշտոնից:

2. ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի ավագ սպա, մայոր Արամ Վարդանի Վարդանյանին **շնորհել** հերթական «**փոխգնդապետ**» զինվորական կոչում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՀԱՎԱՍԱՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (ծառայողական անհրաժեշտությունից ելնելով)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

գնդապետ Վարդան Տիգրանի Կոստանյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի պետ (36)՝ ազատելով նույն զորամասի հաշվառման բաժնի պետի (36) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ՀԱՎԱՍԱՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

գնդապետ Արմեն Հայրապետի Գալստյանին ս.թ. դեկտեմբերի 15-ից **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի պետ (36)՝ ազատելով նույն զորամասի պլանավորման և վերլուծության բաժնի պետի (36) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՀԱՎԱՍԱՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ընտանեկան պայմաններից ելնելով)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ավագ լեյտենանտ Վարդան Պողոսի Ավագյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի դասակի հրամանատար (12)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի դասակի հրամանատարի (12) պաշտոնից:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N          -Ա

« ____ » _________20     թ.                                        ք. Երևան

## ՀԱՎԱՍԱՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (առողջական վիճակի պատճառով)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

գնդապետ Պարգև Նվերի Ղոնախչյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի պետ (37)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի հրամանատարի (37) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N          -Ա

« ____ » _________20     թ.                                                            ք. Երևան

ՑԱԾՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

գնդապետ Վարդան Վարդանի Վարդանյանին ս.թ. դեկտեմբերի 15-ից **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի ավագ սպա (25)՝ ազատելով նույն զորամասի հաշվառման բաժանմունքի պետի (29) պաշտոնից:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ՅԱԾՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (ծառայողական անհրաժեշտությունից ելնելով)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

փոխգնդապետ Արթուր Կոստյայի Յազիջյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրամանատար (28)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի շտաբի պետի (30) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՑԱԾՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ընտանեկան պայմաններից ելնելով)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

մայոր Սահակ Լևոնի Պողոսյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի սպա (20)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի գումարտակի շտաբի պետի (23) պաշտոնից:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.   ք. Երևան

## ՑԱԾՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (առողջական վիճակի պատճառով)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

գնդապետ Արամայիս Գուրգենի Ֆահրադյանին **նշանակել** ՀՀ Աշտարակի զինվորական կոմիսարի տեղակալ (28)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրամանատարի տեղակալի (30) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ՑԱԾՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի («պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ ստանալու դեպքում), ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարի 20 թ. « »-ի N հրամանը՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

փոխգնդապետ Կիրակոս Տիգրանի Ավետիսյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի պլանավորման բաժանմունքի պետ (29)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի պլանավորման բաժնի պետի (36) պաշտոնից:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՑԱԾՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի («նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» կարգապահական տույժ ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում այլ կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

փոխգնդապետ Ալբերտ Վարդանի Ոսկանյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի օպերատիվ բաժնի ավագ սպա (25)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի օպերատիվ բաժանմունքի պետի (30) պաշտոնից:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՑԱԾՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զբաղեցրած պաշտոնում հետագա պաշտոնավարումը բացառող զին-վորական ծառայության սահմանափակմամբ պատժի դատապարտվելիս)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

փոխգնդապետ Վարդան Նիկոլայի Դավթյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի վերլուծության բաժնի ավագ սպա (25)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի իրային ծառայության պետի (30) պաշտոնից:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՑԱԾՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի (ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնինչհամապատասխանելու դեպքում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

փոխգնդապետ Յուրի Լիպարիտի Գավրիլյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ավագ սպա (25)՝ ազատելով ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի հրամանատարի տեղակալի (30) պաշտոնից:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (ծառայության մեջ առաջխաղացման կարգով)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ թողնված ավագ լեյտենանտ Արտակ Սրապիոնի Վարդանյանին **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 1-ին հրաձգային վաշտի հրամանատարի տեղակալ (13):

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

* Հրամանի ձևը վերաբերում է կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողին օրենքով նախատեսված ցանկացած հիմքով զինվորական պաշտոնի նշանակելուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

«____» _________20 թ. ք. Երևան

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (թափուր զինվորական պաշտոնի պարտականությունների ժամակավոր կատարում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի մարտական պատրաստության բաժանմունքի սպա, մայոր Յուրի Լիպարիտի Գավրիլյանին **նշանակել** նույն զորամասի 1-ին հրաձգային գումարտակի հրամանատարի տեղակալի (23) պարտականությունների ժամանակավոր կատարող՝ ազատելով զբաղեցրած պաշտոնի պարտականությունների կատարումից:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

«____» _________20 թ. ք. Երևան

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (զինվորական պաշտոնն զբաղեցնող զինծառայողի ժամանակավոր բացակայության դեպքում՝ պաշտոնի պարտականությունների ժամակավոր կատարում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության 11111 զորամասի մարտական պատրաստության բաժանմունքի սպա, մայոր Յուրի Լիպարիտի Գավրիլյանին **նշանակել** նույն զորամասի օպերատիվ բաժանմունքի ավագ սպայի (25) պարտականությունների ժամանակավոր կատարող:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

«____» _________20 թ. ք. Երևան

## ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (առաջին պայմանագրի կնքմամբ զինվորական ծառայության ներգրավում և երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող զինծառայողի պաշտոնի պարտականությունների ժամակավոր կատարող նշանակում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Աննա Հակոբի Հովհաննիսյանին (ՀՀ Աշտարակի զինվորական կոմիսարիատ) **ընդունել** պայմանագրային զինվորական ծառայության, նրա հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին երեք տարի ժամկետով առաջին պայմանագիր, **շնորհել** առաջին «**շարքային**» զինվորական կոչում և **նշանակել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի կապի հանգույցի հեռախոսային կայանի պետի (5/2) պարտականությունների ժամանակավոր կատարող:

Զինվորական ծառայության օրացուցային ստաժը կազմում է՝ 00 տարի, 00 ամիս, 00 օր:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ